№ 21. ՅՈՒՆԻՍԻ 10 (22) 1876 ՅՈՒՆԻՍԻ 10 (22) № 21.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 բուբլ, կէս տարվանը 3 բուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արտախանեանի խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ.»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն բանվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ։

ՄՇԱԿ

Լրագրի ԿԷՍ ՏԱՐՎԱՑ բաժանորդութեան գինը, յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31 1876 թուի՝ 3 ՐՈՒԲԼ է։ Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրատան մէջ, պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցիչներ չը կան։—Ներքին տեսութիւն։ Նոր տեսակ զոհեր։ Թիֆլիսի դումայի նիստը։ Նամակ Քիշնեից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թուրքիա։ Անգլիա։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նամակ Փարիզից (վերջ)։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՉԸ ԿԱՆ

Այս օրերս մենք առիթ ունեցանք խօսել մեր ժողովրդական ուսումնարանների մասին այնպիսի մի շրջանում և այն տեսակ անձների հետ, որք կատարելապէս տեղեակ են կովկասում եղած մեր հայոց ուսումնարանների դրութեան վերաբերութեամբ։ Ահա կովկասեան հայոց երկու սեռի թէ տարրական, թէ միջնակարգ դպրոցների ընդհանուր դրութեան նկարագիրը։ Ամեն տեղ թէ քաղաքում, թէ գիւղերում ժողովուրդը ամեն պատրաստութեամբ և սիրով գոհում է դրամական միջոցներ ուսումնարանական գործի վրա, թէ միանուագ նուիրատուութիւնների միջոցով, թէ աշակերտների ամսական վճարի ձևով։ Այդ ամսական վճարը լինում է շատ անգամ մի աննշան քաղաքում աւելի մեծ, քան թէ, օրինակ, Թիֆլիսի կլասիական գիմնազիայի աշակերտի համար ծնողներից տրվող ամսական վճարը։

Ուսումնարանի գործը հայ ազգի մէջ մի պահանջ է որ անբաժան է հայ հասարակութեան կեանքից՝ դա դարաւոր մի սովորութիւն է։ Աշակերտները ամեն տեղ բազմաթիւ են և պահանջը ուսում առնելու՝ անհամեմատ մեծ է, գերազանցում ուսումնարանների թուից և շինութիւնների ընդարձակութենից։ „Հայերի մէջ, ասում էր մեզ նորերումս ուսումնարանական շրջանի հոգաբարձուի օգնական, պ. Ժէլեխովսկի, ուսումնարանի գործը մի պահանջ է, դա անբաժան է եկեղեցուց. ուրիշ քրիստոնեայ ազգերի մօտ եօթ խորհուրդ կայ, իսկ հայոց եկեղեցու մէջ ութ խորհուրդ,—և այդ ութերորդ խորհուրդը՝ երեխաներին սովորեցնելն է։“

Այդ ամենը շատ լաւ է, շատ մխիթարական է՝ ձգտումն նիւթապէս ապահովել ուսումնարանները, սովորութիւնը իւրաքանչիւր գիւղի մէջ, քիչ շատ միջոց ունեցող իւրաքանչիւր փոքրիկ հայոց հասարակութեան մէջ անպատճառ ուսումնարան կառուցանել կից եկեղեցու հետ, վերջապէս աշակերտների և աշակերտուհիների ամեն տեղ ահագին բազմութիւնը (պաշտօնական աղբիւրներից յայտնի է որ կովկասեան հայոց ուսումնարանների մէջ 8000 երեխաներ են ուսանում), այդ ամենը շատ մխիթարական է, ասում ենք,—բայց ուրիշ կողմից եթէ հարցնենք թէ ի՞նչ են այդ ուսումնարանները, որոնց վրա այդքան փող է գնում, որոնց վրա այդքան ջանք է թափված, որոնցից ժողովուրդը բարոյական ամենամեծ հետևանքների է սպասում, ի՞նչ արդիւնք են ցոյց տալիս այդ ուսումնարանները,—ստիպված կը լինենք խոստովանվել որ՝ գրեթէ ոչինչ։

Մեր ուսումնարանները մեծ մասամբ վատ կերպով են շինված, չունեն բաւական լոյս, օդը մաքուր չէ կարող լինել նեղ և ցած սենեակներում, աշակերտները անմաքուր են, ել և մուտքի դռները վատ են պահվում... և այլն։ Մի խօսքով ժողովուրդի կողմից կայ սէր և ձգտումն դէպի ուսումնարանական գործը, հայը չէ խնայում այդ գործի համար իր դրամը և սիրով ուղարկում է դպրոցը իր երեխային,—բայց նոյն ուսումնարանները վատ կերպով են կառուցվում, և վատ կերպով են կառավարվում...

Միտքը լաւ է, ձգտումը գովելի է,—բայց գործադրութիւնը անպիտան....

Բայց ամենամխիթարն այն է որ մեր ուսումնարանները իրանց գլխաւոր, առաջին, ուղղակի նպատակին չեն հասնում,—այն է՝ ոչինչ չեն սովորեցնում երեխաներին։

Ի՞նչ է պատճառը։ Պատճառը շատ հասարակ է՝ ուսուցիչներ չունենք։

Այս գլխաւոր և անհրաժեշտ տարրի, ուսուցիչների պակասութեան պատճառով, մեր հայոց ուսումնարանների լայն, ընդարձակ, ճշմարիտ զարմանալի ժողովրդական կազմակերպութիւնը՝ մնում է աննպատակ, քանի որ ուսուցիչներ ունենալու չենք։

Իսկ ուսուցիչներին պատրաստելու համար հարկաւոր է մի մասնագիտական ուսուցչական դպրոց ունենալ։ Մենք չենք կարող չը համաձայնվել այն մտքի հետ, որ սկզբից թող հայոց հասարակութիւնը ունենայ իր ստիպենդիատներ Թիֆլիսի կառավարչական ուսուցչական դպրոցում, որք կարողանային պատրաստվել որպէս մասնագէտներ, իսկ յետոյ մեզ անհրաժեշտ է մտածել և մեր սեփական ուսուցչական դպրոց հիմնելու։

Մենք պէտք է աշխատենք կովկասեան մեծ քաղաքներից մինի մէջ գտնվող հայոց միջնակարգ ուսումնարաններից մինը ուսուցչական դպրոց դարձնել, կամ բոլոր միջոցները դործ դնել մի նոր ուսուցչական դպրոց մեզ համար բաց անելու։ Մենք մեր վերև յիշված խօսակցութենից դուրս բերեցինք այն համոզմունքը որ ուսումնարանական շրջանի վարչութիւնը շատ գոհ կը լինի եթէ մեզ աջողվի այդ տեսակ հայոց ուսուցչական դպրոց բանալու, որովհետև փորձով համոզվել է այժմ, որքան ուժեղ, ինքնուրոյն է և որքան օգտակար կարող է լինել կովկասեան հայերի ուսումնարանական կազմակերպութիւնը, եթէ ունենայ և այդ անհրաժեշտ տարրը՝ լաւ պատրաստված ուսուցիչներին։

Մենք, մեր կողմից այն համոզմունքի ենք, որ եթէ Ս. Էջմիածնի ճեմարանը, թողնելով իր նպատակները բաձրագոյն դպրոց դառնալու, թողնելով իր լայն, անիրագործելի պրոգրամը, իր աստուածաբանութիւններով, իր լատիներէն, յունարէն, հրէարէն լեզուներով, իր անթիւ առարկաներով և ոչ մի տեղ ուսում չը վերջացած պրոֆէսորներով՝ դառնար ուսուցչական դպրոց, նա աւելի արդիւնաւոր, մեծ, օգտաւէտ դեր կը խաղար հայոց կեանքի մէջ, աւելի շուտ կը հասնէր իր կրթողական, դրական նշանակութեանը, աւելի մօտ կը լինէր ճշմարիտ, հայերի ժամանակակից պահանջմանը....

Մենք ունենք անթիւ ժողովրդական դպրոցներ, նիւթական միջոցներ էլ ունենք—բայց ուսուցիչներ չունենք։ Մեզ հարկաւոր է ուսուցչական դպրոց և ոչ թէ աստուածաբանական ակադէմիա. մեզ հարկաւոր են ուսուցիչներ և ոչ թէ գիտական աստուածաբաններ։

Եթէ մեր հոգևորականութիւնը չը շտապէ այդ կարևոր գործին ձեռք տալու,—նա դարձեալ կապացուցանէ իր անընդունակութիւնը ուսումնարանական գործը ժամանակակից պահանջմանը համեմատ առաջնորդելու։ Նա կապացուցանէ թէ կարող է միայն նուիրատուութիւններ ժողովել, շինութիւններ կառուցանել,—բայց երբէք չէ կարող ուսումնարանները կառավարել։

Մենք ունենք ժողովրդական ուսումնարաններ,—մեզ օդային ամրոցներ հարկաւոր չեն։ Մենք ունենք 8000 աշակերտներ, որք զուրկ են մնում ուսուցիչներից՝—մեզ ճեմարանական, օդային-աստուածաբանական թէորիաները պէտք չեն։ Մեզ հարկաւոր են ժողովրդական ուսումնարանների վարժապետներ։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

(Շարունակութիւն և վերջ)

Եղիշէ վարդապետ հանրածանօթ և հայերի մէջ ժողովրդականութիւն ստացած ու իր ընթերցողներից սիրած հեղինակի հերթն է հիմայ։ Խօսենք նորա վրա էլ։

Որովհետև Եղիշէն ուրիշ կարգի և ուրիշ ժամանակի մատենագիր է՝ ուրիշ կերպով էլ պիտի խօսուի նորա վրա։ Նա դրի է անցնում այնպիսի իրողութիւններ, որ իր սեպհական աչքերով տեսել է, նա խօսում է այնպիսի անցքերի վրա ուր ինքը անձամբ ներկայ է գտնուել և մասնակցել։ Աւելացնենք որ նա իր պատմութիւնը գրելու ժամանակ ձեռքին պիտի ունենար պարսից թագաւորութեան պաշտօնական թղթերը և անշուշտ պիտի գիտենար պարսից լեզուն։

Այնքան ծանօթութիւններ պարսից սովորութեան ու կրօնի մասին, որ տալիս է մեր մատենագիրը, ասում է պրոֆեսորը, մեզ ցոյց են տալիս Եղիշէի հմտութիւնը այդ բաների մէջ։ Իսկ ինչ վերաբերում է նորա օգտակար ու հետաքրքիր պատմութեան վաւերականութեանը՝ աւելորդ է մինչև անգամ քան ասել դորա մասին, որովհետև ինչպէս ասացինք, ոչ թէ միայն իր աչքով տեսած անցքերն է մեզ աւանդում, այլ և որպէս մի հայելու մէջ երևացնում է հայոց անցեալ կեանքը, որի մասին ոչ ոք չէ կարող կասկած յայտնել։

Բայց թողնենք այս հնագիտական նկատողութիւնները և մեզանից մի երկու խօսք ասենք նորա պատմութեան բովանդակութեան վրա, թէ երբ, ինչ, և ինչպէս է նկարագրում նա հայոց անցեալ կեանքը։

Հինգերորդ դարու կէսում հայոց թագաւորութիւնը դարձեալ մի անգամ կործանվում է՝ ծածկելով Արշակունեաց արքայական դահը մահուան սև քողով։ Հայերը որ իրանց ազգային աղատութեան համար, հայերը, որ իրանց անկախութեան համար անթիւ դարերի ընթացքում անդադար պատերազմելով ամեն արդելքների դէմ, ուզում էին ապրել, մնալ աշխարհիս երեսին՝ այս անգամ յոգնել թուլացել էին և Հայաստան աշխարհի իւրաքանչիւր գաւառը ասես անկախ ապրում էր քաղաքականապէս։ Ոմանք միմեանց կրօնական, քաղաքական թշնամի, ոտի տակ գցող հայրենի սեպհականութիւնը, իրաւունքները, հայրենակցի աղատութիւնները, հնազանդող, գերի օտար բրոնակալների, միմեանց իրարու մերա բարեկամ, միշտ միմեանց օգնող, դրաներով կից կրօնական, քաղաքական գործերում, հայրենի սեպհականութեան, իրաւունքների, աղատութիւնների համար արիւն թափող, միշտ պաշտպանող և բացասող, չընդունող ոչ մի տեսակ բռնակալութիւն։ Բայց այս միացեալները բաւական չէին դէմ դնելու այն ժամանակի արևելեան բարբարոս բռնակալութեանը, որ ներկայացնում էր պարսից Յազկերթ թագաւորը իր ստոր ու տմարդ անձնաւորութեան մէջ։ Սա իրան բաւական հզօր համարելով և երկիւղ չունենալով արևմտեան կայսրութենից (Բիւզանդիա) նուաճում է Հայաստանի շատ գաւառներ՝ մտցնելով այդտեղ արիւն ծծող ու ամեն բան քանդող մարդպաններին, որոնց վարչութեան թշուառ ժամանակը հայոց պատմութեան համար դառել է մի թուական։

Սակայն հայոց թագաւորութեան դահի կործանելը մի հեշտ բան էր։ Քանի անդամ հայ քաղաքական կեանքը մահացուցից հարուածներ էր կրել։ Ով էր հարցնում, ով էր մտածում, թէ հայոց թագաւորական թախտի վրա պարսիկ պիտի նստի թէ հայ։ Հայերը, ինչպէս ասեցի, յոգնել էին շատ պատերազմելուց։ Հայ քաջերի բազուկներն էլ չէին կարողանում դիմանալ արևելեան բռնակալութեանը՝ մի հայ քաջի դէմ հարիւրը կային կանգնած,—ով կարող էր համարձակվել սրանց դէմ դուրս գալ։ Հայերը համբերում էին, հայերը հրաժարվում էին սեպհական ազգային թագաւորական դահ ունենալուց, բայց պահանջում էին ընտանիքի, ազգութեան, հասարակութեան, լեզուի, դրականութեան, հայրենիքի, եկեղեցու, կրօնի ազատութիւնը, սուրբ, անվիճելի սեպհականութեան պաշտպանութիւնը։

Պարսկական անիրաւ ոգին չէ բաւականանում հայերի քաղաքական հպատակութեամբ՝ մարզպաններին խրատում է, հրամայում է արմատախիլ անել, ջնջել հայ անունը Հայաստանից։ Բայց այս այնպէս հեշտ չէր։ Ինչ անէր։

Հինգերորդ դարում քրիստոնէական հաւատը Հայաստանի շատ տեղերում խոր արմատներ էր բռնել։ Կրակապաշտութիւնը փոխարինուել էր մի աւելի բարձր, վսեմ կրօնով։ Շատերը քրիստոնէական հաւատը՝ մի խօսքով հայոց եկեղեցին՝ համարում էին մի ներքին կապ հայոց ազգութեան մեծ մասի և հետևաբար Հայաստանի զօրութեան, ուժի։ Այո, չէին սխալուել։ Եւ ահա հենց այդ պատճառով պարսիկ բռնակալ Յազկերտը դրդած մոլեռանդ մոգերից, ուզում է հասնել իր բարբարոս նպատակին։ Նա սկսում է ձեռք տալ հայոց եկեղեցուն, ստիպում է իւրաքանչիւր հային փոխել իր խղճմտանքը, դուրս դալ, հեռանալ անհատական համոզմունքներից, թողնել բարձր հաւատը և երկրպագութիւն տալ արևին, որ հայերի համար արդէն մեռած աստուած էր համարվում։

Սկսվում են հալածանքները, շարունակվում են մարտիրոսութիւնները, գործ են դնվում անիրաւութիւններն ու խարդախութիւնները՝ իր հայրենի աշխարհին ու ազգութեանը ուրացած Վասակը այդ չարութիւններում մեծ դեր է խաղում։ Յոգնած, թուլացած հայերը նորից ոգի են ստանում և սկսում են դէմ դնել, ստրկութեան դուռը տանող

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԵՍԱԿ ԶՈՀԵՐ

—

Մեր կովկասեան ժողովրդի ստորին դասի կանանց սեռի մէջ օրից օր անբարոյականութիւնը աւելի և աւելի տարածվում է: Հայ, վրաց, և իմերել ստորին դասի աղջիկները, կտոր հացի կարօտ, լցնում են այժմ զլսաւորապէս Թիֆլիսի հասարակական տները:

Բացի այն բնական պատճառից, որ այդ ողորմելի էակները ընկնում են այդ անբարոյականութեան մէջ որովհետև ուրիշ միջոց չունեն իրանց տարրաւորը ապահովելու, կայ անբարոյականութեան հետզհետէ տարածման անմիջիթար այդ երևոյթի մէջ և մի այլ պատճառ, այն է զիւղացի ողորմելի, միամիտ աղջկերանց զանազան չարագործ աֆէրիստների ձեռքին ընկնելը....

Այդ բարոյական հարատահարութեան երևոյթները զուցէ աւելի զարհուրելի են, քան թէ նիւթական հարստահարութեան որ և է երևոյթ: Մենք մեր ձեռքում չունենք մի այլ զէնք, բացի խօսքից,— գոնէ այդ ոյժը հրապարակական խօսքը գործ դնենք հասարակութեան քնած խղճմտանքը զարթեցնելու համար:

Բայց անենք փոքր ինչ մեր ստորին ժողովրդի բարոյական կեանքը ծածկող վարագոյրը, և ցոյց տանք զարհուրելի և ճշմարիտ իրականութիւնը այն սակաւաթիւ անձինքների աչքերին, որք չեն խորշում ճշմարտութեան, թէև զզվելի, մերկ պատկերը տեսնելու.... կան անձինք որք զզվանքով են նայում այս կամ այն երևոյթի վրա և չեն մտածում որ իրանք էլ մարդիկ են, իրանք էլ նոյն հասարակութեան անդամներ են, որին պատկանում են և իրանց անբարոյական և քաղցած եղբայրները: Այդ տեսակները թող չը կարդան մեր յօդվածը: Բայց թող լսեն մեզ նոքա, որք ցաւակից են հասարակական ամեն ցաւերի և ախտերի....

Ահա իրողութիւնները: Շատ անգամ Թիֆլիսի հասարակաց տների մէջ լինում են տասներկու, կամ տասն-երեք տարեկան աղջիկներ, որք ծառայում են այդ տների մէջ որպէս աղախիններ: Դոցանից շատերը չեն ճանաչում անգամ իրանց ծնողներին, իսկ մեծ մասը գնված են եղել իրանց ծնողներից, ինչպէս մի որ և է ապրանք: Թէ ինչ է այդ ողորմելի էակների այդ տեսակ հիմնարկութիւնների մէջ բնակվելու հետևանքը,— ընթերցողը շատ հեշտ կարող է ինքն եզրափակել... Բարոյական և մտաւոր ստոր զարգացման մէջ գտնվող աղքատ զիւղացի կամ քաղաքի բնակիչների ստորին դասի ծնողները ծախել են իրանց աղջիկներին: Այդ քաղցած, անբարոյականութեան մէջ ընկած էակներին բարոյականութիւն քարոզելը՝ ապարդիւն կը լիներ: Թողնենք դրանց, թողնենք այդ ողորմելի ծնողներին և ուշադրութիւն դարձնենք այն մարդկերանց վրա, որք ներգործական դեր են խաղում այդ առուտուրի մէջ: Կան մարդիկ, որք մեր երկրում զիւղից զիւղ ման գալով, որսում են խեղճ, միամիտ, ռամիկ զիւղացիներին զանազան սուտ խոստումներով և առաջարկած դրամի միջոցով հրապուրում են դրանց: Այդ աֆէրիստները վերցնում են զիւղերից տասն-երկու, տասն-երեք կամ տասն-չորս տարեկան գեղեցիկ աղջկերանց, լրբ թէ դրանց Թիֆլիսի զանազան հարուստ տների, իշխանների մօտ որպէս ծառաներ, աղախիններ տանելու նպատակով: Միամիտ զիւղացիները հաւատում են, մանաւանդ զրաւած լինելով ստացած արծաթով և վերջը իմանում են որ դրանց աղջիկները ոչ թէ իշխանների ու հարուստ տների մէջ են ծառայում,—այլ յանձնված են հասարակական տներին, որոնց ագենտներ են եղել զիւղից զիւղ այն ման եկած մարդիկը.... Մէկ տարի սրանից առաջ Սղնախի գաւառի Սակօբ զիւղը մի կին էր եկել, որ իրան Թիֆլիսում բնակվող իշխանուհի էր ձևացնում և մի գեղեցիկ աղջիկ վերցնելով խոստացաւ որ կը տանի Թիֆլիս և ուսումնարան կը տայ: Ծնողները ի հարկէ ուրախութեամբ յանձնեցին նրան իրանց միակ աղջիկը: Վերջն իմացան որ այդ իշխանուհի անուանված կինը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի հասարակական տան կառավարիչ և որ փոքր աղջիկը ուսումնարանի փոխանակ գտնվում է այժմ այդ հիմնարկութեան մէջ:

Սակաւ չեն և այնպիսի ծծմայրեր, որք իրանց մօտ ընդունում են ապօրինի ծնված իգական սեռի երեխաներին, պահում են նրանց մինչև տասն և երեք, տասն և չորս տարեկան հասակը, իսկ յետոյ ծախում են խեղճերին հասարակական տներին....

Միթէ՞ այդ տեսակ երևոյթները յայտնի չեն մեր քաղաքի բարեկարգիչներին, մեր վարչութիւններին, մեր ոստիկանութեանը: Եւ եթէ յայտնի են դրանց, միթէ՞ իմանալով, լսելով, տեսնելով այդ ամենը,— այնու ամենայնիւ չեն ուզում հասկանալ....

Ահա մեզ կովկասեան Ա. Ֆրիկա: Եվ ինչի՞ զզվանքով ենք խօսում Ա. Ֆրիկայի նեգրների վաճառականութեան մասին: Գոնէ այդ վերջինները վաճառվում են ոչ թէ անբարոյականութեան, այլ երկրագործական մշակութեան համար: Եվ ինչի՞ արհամարհանքով ենք նայում մահմեդական երկիրների մէջ հարեմներին ծախվող կանանց և աղջիկների զզվելի երևոյթի վրա:

Միակ միջոց է կառավարութեան ուշադրութիւնը այդ սարսափելի, հետզհետէ տարածվող և ընդարձակվող երևոյթի վրա դարձնելու,— այն է զրգռել այդ մասին հասարակական կարծիքը, զարթեցնել հասարակական խղճմտանքը:

Գ. Մեհրաբեանց

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԵՐԸ

—

Յունիսի 7-ին, երկուշաբթի օրը, կայացաւ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը: Նստի սկզբից նախագահ, պ. Կիպրիանի հաղորդեց ձայնաւորներին մի հեռագիր Լազոդէխից ստացած մի շատ տխրալի անցքի մասին: Զաքաթալի վիճակի կառավարիչ, պ. Շօլկովնիկով հաղորդում է հետևեալը՝ Զաքաթալ քաղաքի մեծ մասը յունիսի 5—6 գիշերին կատարելապէս այրվեցաւ: Հրդեհից վնասված քաղաքի բնակիչները սարսափելի դրութեան մէջ են: Պ. Շօլկովնիկով խնդրում է Թիֆլիս քաղաքից օգնութիւն Զաքաթալի համար: Նախագահը մի քանի վիճաբանութիւններից յետոյ, արդեօք իրաւունք ունի դումայի քաղաքի փողերից վնասվածներին օգնութիւն տալ, առաջարկեց ձայնաւորներին ստորագրութեամբ հաւաքել որ և է գումար: Ստորագրութեանը մասնակցելու, պ. Խարազովի կարծիքով, պէտք է առաջարկվի ուղղակի և ձայնաւորների կողմից և քաղաքի բնակիչներին: Նոյն երեկոյ ստորագրութիւնը սկսվեցաւ դումայի դահլիճում:—Դումայի նոյն նստում քննվեցաւ Թիֆլիսի ձիավարների գանգատի հարցը նոր նշանակված կառքերի տակայի վրա: Վճռվեցաւ մոցնել նոր տակա սեպտեմբեր ամիսին:—Քննվեցաւ նոյնպէս ներկայ 1876 թուի համար կազմված քաղաքային նախահաշիւը: Կարճ վիճաբանութիւններից յետոյ նախահաշիւը ընդունվեցաւ: Առհասարակ պէտք է խոստովանվել որ նախահաշիւը այս տարի շատ լաւ է կազմված և այդ կողմից չէ կարելի շնորհակալ չը լինել քաղաքային վարչութեան դրապահից, որ գլխաւորապէս նորա կազմելու վրա աշխատած է:—Ցայսաւոր պ. Մատինով առաջարկեց աւելացնել քաղաքագլխի ռոճիկը: Այդ հարցը վճռելու ժամանակ քաղաքագլուխը հեռացաւ և պ. Մատինով նստեց նախագահի տեղը: Վճռվեցաւ քաղաքագլխի ռոճիկի վրա, որ առաջ 4000 րուբլ էր, երեք հազար րուբլ աւելացնել, այնպէս որ նորա ռոճիկը այժմ 7000 րուբլ կը լինի:—Կային նոյն նիստում և մի քանի այլ մանր հարցեր: Վճռվեցաւ ամառ ժամանակ փոքր փոփոխութիւններ անել Դումայի դահլիճի մէջ, թէ աւելի կանոնաւոր օդափոխութեան համար, թէ ձայնաւորների նստարանների վերաբերութեամբ: Նոյնպէս վճռվեցաւ դումայի շինութեան առջև անցնող փողոցի վրա շօսէ շինել, որովհետև այժմեան քարայատակի վրա անցնող կառքերի ձայնը խանգարում է դումայի նստերին, և շրջ ժամանակն էլ անհնարին է պատուհանները բաց անել:—Յունիսի 7-ի նիստը երևի նախավերջինը կը լինի Այնուհետև երկու ամիս շարունակ ձայնաւորները արձակուրդ կունենան մինչև սեպտեմբեր ամիսը:

ՆԱՄԱԿ ՔԻՇՆԵՎԻՑ

—

Մայիսի 22-ին

«Մշակի» այս տարուայ № 16 թերթի մէջ Քիշնևից հաղորդած լուրի առթիւ, հարկ եմ համարում յայտնել, որ, ամենևին ոչինչ անօրէնութիւն չէ եղած ցայսօր հոգևոր իշխանութեան կողմից, վիճակիս փոխանորդ արժ. Սարգիս վարդապետի Էջմիածին ձեռնադրուելու համար կանչուած լինելու վերաբերութեամբ և թէ՝ այստեղի Հոգևոր Կառավարութեան քարտուղարը գալու է Թիֆլիս նորա հետ, տեղւոյդ Կոնսիստորիայի քարտուղարի պաշտօնը ընդունելու համար, նոյնպէս ստոյգ չէ:

Այսպէս է վերջ տալիս մեր հինգերորդ դարու հեղինակը իր գրքին, որի կենդանի նկարագրութիւնները ներշնչելով մեր այժմեան բանաստեղծներից մէկին՝ կերգել տան, կասեցնել տան Վարդանանց վերջին տուած ճակատամարտը՝ փղերով, անասուն և սուն հրէշներով կազմած ու զրահաւորված պարսից բանակի դէմ. ուր ինքը քաջ Վարդանը այնքան կռիւների ցյետոյ կընկնի հնչասպառ, հայ արիւնով ծարաւ պարսկական սրի տակ. ահա այդ բանաստեղծի մի քանի խօսքերը, եթէ թոյլ կը տաք՝

«Կորաւ Դիւցազը, կորաւ Հայաստան,
Չի հայոց միակ յոյսն էր քաջ Վարդան.
Թշուառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետև չը սիրեց ոչ ով.
Դարձ ետև ետև գնացին, անցան,
Հեշտութեան կենաց և գանձի մոլար
Աղնիւ նպատակն մոռացան իսպառ.
Իրանց սրբազան տեղիք պարծանաց
Թողին, մատնեցին խուժադուժ ազգաց,
Եւ հողը, գնած գնով սուրբ արեան
Հարանց՝ արին չար թշնամիք կոխան.
Մոռացան վրէժն այն նուիրական,
Որ աւանդել էր նոցա քաջ Վարդան
Եւ ատելութեան փոխանակ՝ պարսկին
Ցոյց տուին միշտ սէր և յարգանք խորին.
Ծրռեցին վիզերն պարսից լծի տակ,
Դիւրութեամբ դարձան հրլու հրպատակ,
Ախ, արդարացաւ տեսին Վարդանին,
Որ նախատեսաւ անկումն ազգին.
Հայը հետամուտ չէր ազնիւ մահուն,
Որ յետոյց թողնէր պանծալի անուն.
Վասակաց թիւը չատցաւ դարեդար,
Զուտ ազնիւ հոգիք չերևցան իսպառ.
Գործի եղեռան դարձան օտարաց,
Ոչ ոք դարմանիչ էր ազգին չարեաց....
Թող լռեմ, լռեմ, ազնիւ պատանի,
Այս թշուառ անցքէն միտքս սասանի,
Քանի կը յիշեմ՝ սիրտս խոցոտի,
Ու ճըմված հոգիս վրիժու բոցոտի:
Մոկերօն պարսը կայ մինչև այսօր,
Ունի թագ ու գահ չքեղ փառաւոր
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքք բարեշէն, տէր է շատ ազգաց,
Իսկ հայը... վայ նորա դառը օրերուն,
Ինչ ունի, բայց թէ լոկ և եթ անուն,
Որը և յաճախ ինքը ամօթից
Զրզուած մերժումէ իրա վրայից:
Ախ, ցոլա, փայլէ տխրադէմ լուսին,
Դուցէ, քու փայլից փայլ տաս և հային,
Պատմէ չատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրումէր Վարդան
Մայրենի հողը—աշխարն Հայաստան.

III

Մեր հին կեանքում այնքան թափառելուց յետոյ՝ դանք մեր նոր կեանքին, մեր լսած ու տեսած օրերին և մի խօսք էլ մեր աշխարհաբար, կենսատու լեզուի վրա ասենք ու այնպէս կնքենք մեր յօդուածը.

հրամաններին: Մեծ, պզտիկ, ծեր, տղամարդ, կին երիտասարդ, օրիորդ, պատանի, աղջիկ ու մանուկ երդվում են հաստատ մնալ մինչև վերջին չունչը հայրենիքին, աղդութեանը, եկեղեցուն: Այդպէս էլ անում են: Սրբա հաւաքուելով քաջ Վարդան Մամիկոնեանի դրօշակի տակ մինչև յիշատակութեան արժանի, հայրենի աշխարհի աղատութեան համար ուխտած մահը դաւում և պատերազմում են:

Մեր Եղիշէն, մեր սիրելի պատմաբան ու մի և նոյն ժամանակ բանաստեղծ, պօէտ Եղիշէն իր սիրուն զրչով, հայկական մաքուր, պարզ ոճով, հինգերորդ հայոց ոսկէ դարու լեղուով նկարագրում է իր պատմութեան մէջ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» այդ սարսափելի անցքերը, «յորում բազումք առաքինացան քան զսակաւս:» Պէտք է կարդալ և տեսնել թէ ինչ գոյներով նշանում է նա մի կողմից Ցաղկերտ թագաւորին, որ «մերթ չանթէր, դալարէր իբրև զօճ թիւնաւոր, մերթ պարզէր, գուէր իբրև զառիւծ զայրացեալ. գեղոյր և տապալէր երկրիմի մտօք, զսորհուրդս կամացն կամէր կատարել», իսկ միւս կողմից ուրացեալ Վասակին, «այն որ կամէրն թագաւոր լինել մեզօք հայոց աշխարհին որ երևեցաւ տեղի զերեզմանի նորա... ոչ ինչ եթող չարին՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր:» Պէտք է թերթել և աչքի անցնել նորա գրած տողերը իր ժամանակի կանանց մասին, որոնցից «հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչէր՝ ոչ միայն որ աւաքադոյնքն էին, այլ զլաղումս ի կրտսերագունացս անտի»: Ցետոյ թէ՝ «Տիկնայք «փափկասունք հայոց աշխարհին... խոտաբուտ կերանք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ ինդութեամբ, և ոչ յիշէին զսովորական «սիրելութիւնն... մոռացան զկանացի տկարութիւն «և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազ«մին»:

Ես չեմ կարող վերջացնել իմ խօսքերը Եղիշէի մասին, առանց քաղելու նորա գրուածից դարձեալ մի քանի տողեր: Նա որ իր պատմութիւնը սկսեց՝ այն ժամանակներից, երբ Խորենացին՝ հայոց Հերոդոտոսը դադարել էր ողբով՝ վերջացնում է ցաւալի խօսքերով, որ յետոյ Ղազար Փարպեցին պէտք չարունակէ իր գեղեցիկ զրչով:

Ահա նորա բուն խօսքը՝ որ ասես ամփոփումն է իր գրքի՝.. «ամենայն չարիք եկին հասին յա«ւուրս մեր. կենդանեաւ մերով տեսաք զդիակունս «անձանց մերոց. Քաջ նահատակք մեր անկան «ի պատերազմի, և սուրբք քահանայք մեր խողխո«ղեցան ի ձեռաց անօրինաց. գեղեցիկ երիտա«սարդքն զենան ի սպանումն, և բազում կուսանք «վարեցան ի գերութիւն. զիրք կանայք անկան ի «տառապանս այրութեան և բազում որբք կակա«ղին դառնապէս: Ազատ եկեղեցի անկաւ ի ծա«ռայութիւն հեթանոսաց և սուրբ քահանայք նորա «կուփին, չարչարին յանօրէն հարկահանաց. Բար«ձեալ է ողորմութիւն յաշխարհէ, և հեռացեալ է «դութ յիւրաքանչիւր մտաց. Երկինք ի վերուստ «են բարկացեալ, և երկիր ի ներքուստ կայ յերերի «տատանման... Այդ, ո՞չ ապաքէն վասն մերոյ հեղ«գութեան անցին այս անցք չարչարանաց ընդ աշ«խարհս:»

Հայը հետամուտ չէր ազնիւ մահուն,
Որ յետոյց թողնէր պանծալի անուն.
Վասակաց թիւը չատցաւ դարեդար,
Զուտ ազնիւ հոգիք չերևցան իսպառ.
Գործի եղեռան դարձան օտարաց,
Ոչ ոք դարմանիչ էր ազգին չարեաց....
Թող լռեմ, լռեմ, ազնիւ պատանի,
Այս թշուառ անցքէն միտքս սասանի,
Քանի կը յիշեմ՝ սիրտս խոցոտի,
Ու ճըմված հոգիս վրիժու բոցոտի:
Մոկերօն պարսը կայ մինչև այսօր,
Ունի թագ ու գահ չքեղ փառաւոր
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքք բարեշէն, տէր է շատ ազգաց,
Իսկ հայը... վայ նորա դառը օրերուն,
Ինչ ունի, բայց թէ լոկ և եթ անուն,
Որը և յաճախ ինքը ամօթից
Զրզուած մերժումէ իրա վրայից:
Ախ, ցոլա, փայլէ տխրադէմ լուսին,
Դուցէ, քու փայլից փայլ տաս և հային,
Պատմէ չատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրումէր Վարդան
Մայրենի հողը—աշխարն Հայաստան.

III

Մեր հին կեանքում այնքան թափառելուց յետոյ՝ դանք մեր նոր կեանքին, մեր լսած ու տեսած օրերին և մի խօսք էլ մեր աշխարհաբար, կենսատու լեզուի վրա ասենք ու այնպէս կնքենք մեր յօդուածը.

ների խմբի, գիւղի տանուտէրի և ճանապարհի չինութեան վրա վերահասութիւն անող պաշտօնեաների մէջ։ Ասում են որ գիւղացիները մինչև անգամ յարձակվեցան և ծեծեցին տանուտէրին։ Աշակերտին դարձեալ ստիպեցին շարունակել իրանց աշխատանքը անտառի մէջ։

—

«Արարատ» ամսագիրը նորերումս ասում էր որ երբէք չէ պատահել որ հայոց եկեղեցիները փակվէին ճաշոցի փողերը չը տանելու համար։ Ամսագիրը ասում է որ եկեղեցիները փակվում էին միայն հնութեան համար։ Բայց օրինակ, Ախալքալաքից ոչ հեռու գտնվող ԴԻԼԻՍԿԱ գիւղում ինչի փակեցին եկեղեցի և մօտ 20 օր դա փակված մնաց։ Այդ եկեղեցին ինչպէս մեզ այժմ գրում են, հին չէ, նա նոր է, մի քանի տարի է որ չնված է։ Գուցէ փակելու ուրիշ պատճառ կար։ Բայց ինչ է պատճառը, որ հէնց որ հոգեւորականութիւնը ստացաւ այդ գիւղի եկեղեցու ժողովրդից ճաշոցի փողերը, եկեղեցու դռները խսկոյն բացվեցան ժողովրդի համար։

—

Մայիսի 31-ին ԹԻՖԼԻՍԻ Դումայի մէջ քննվեցաւ մեզ մօտ քաղաքային փօստը հիմնելու հարցը։ Վճռվեցաւ անպայման ժամանակով հիմնել քաղաքային փօստը, մինչև որ ինքն հիմնարկութիւնը կարողանայ իր ծախսերը ծածկել։ Քաղաքը իր կողմից յանձն է առնում այդ հիմնարկութեան վրա նշանակվող ծախսերից տարեկան 1015 ռուբլ գումարը։ Մնացած տարեկան գումարը որ այդ գումարից փոքր ինչ մեծ է, կը տայ կառավարութիւնը և միանուագ 600 ռուբլ կառնվի փօստային վարչութեան գումարների մնացորդներից։

—

Յունիսի 3-ին, հինգշաբթի օրը, ԹԻՖԼԻՍԻ դումայի նիստը չը կայացաւ, որովհետև մինչև 9 ժամը ներկայացան միայն 18 պատգամաւորներ։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ՝ «Լսում ենք որ մի հայ երիտասարդ պ. Բ. Պիճիկեանց, մտադիր է այս ամառը մի քանի հասարակական դասախօսութիւններ անել Ախալքալաքում մեղուապահութեան, շերամապահութեան և այգեպանութեան վրա։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հաղորդում են մեր լրագրին, մայիսի 29-ից, որ ահա 15 օր է որ Ախալքալաքում չարունակ անձրև է գալիս։ Մի քանի անգամ այդ ժամանակամիջոցում և կարկուտ է եկել։

—

ԿԱԽ գիւղից մեզ գրում են մայիսի 27-ից՝ «Զաքաթալի գաւառապետ պ. Բ. Շօլկօվնիկով մայիսի 13-ին եկաւ Կախ գիւղը մեզանից հրաժարականը առնելու համար։ Նա, ինչպէս լսել ենք Զերնօմօրեան վիճակի նահանգապետի պաշտօն է ստացել։ Այդ պաշտօնեան ամենալաւ յիշատակ է թողնում թէ իր ստորադրեալների, թէ ժողովրդի մէջ։ Հրաժարվելու օրը նա կարող էր համոզվել, թէ որքան ջերմ համակրութիւն նա գրաւած ուներ ամբողջ հասարակութեան կողմից։— Այս տարի մինչև մայիսի 9-ը Կախի կողմերը մեծ երաշտութիւն էր, իսկ յետոյ եօթ օր չարունակ սաստիկ անձրև եկաւ և եղանակը յանկարծ ուրտ դարձաւ։ Մերձակայ սարերը ձիւնով ծածկվեցան։ Այնուհետև, ամսիս 16-ից սկսած մինչև այսօր սաստիկ չոքեր է անում։ Ոչխարատէրերը և շերամապահները մեծ վնասներ կրեցին։ Շատ ցաւալի կը լինի, եթէ միւս բերքերն էլ փչանան։

—

Անչուշտ դուք յիշում էք իմ անցեալ տարուայ նամակը, ուր խօսում էի ես մեր նոր լեզուի վրա, թէ պ. պրոֆէսօրը կամենալով ուսումնասիրել կենդանի լեզուն վաղուց արդէն ձեռք էր բերել մեր զանազան բարբառների ներկայացուցիչներին, որոնցից առաջին տեղը թէ իրանց ամբողջութեամբ և թէ արժանաւորութեամբ պիտի բռնէին Թիֆլիսի ժողովրդական բանաստեղծ Սայաթ-Նովան և մեր արժանայիշատակ և անմոռանալի խաչատուր Աբովեանը։

Սայաթ-Նովայի վրա ես արդէն խօսեցայ։ Մընում է ինձ մի երկու խօսք ասել հիմայ Աբովեանի վրա, որի «Վէրքը» թէև պրոֆէսօրը դեռ չէ վերջացրել թարգմանաբար, բայց այս անգամ ես կը վերջացնեմ։

Բաւական է միայն ասել, թէ պ. Դիլլօրիէն այնքան արժանաւոր է գտել մի հեղինակութիւն, որին նուիրելով իր ակադէմիական *) ուշադրութիւնը չմնել է նորան իր դասախօսութեան գիրք թարգմանելու համար, ուր նա գտնելով շատ նիւթեր մի նոր, տասնուիններորդ դարու կեանքին վերաբերեալ՝ կարողանում է ասել, թէ հայերը դեռ մեռած չեն, դեռ ապրում են, և թէ կարծես մեզ մաաբերում է այդ գիրքը հինգերորդ դարու հայոց կեանքը։

Այո՛, ինչ նշանակութիւն որ ունի մեր վերոյիշեալ Եղիշէն հինգերորդ դարու հայոց կեանքի նկարագրութեամբ, նոյնը և դորանից էլ աւելի կարելի է ընծայել Խ. Աբովեանին, որ իր գեղեցիկ ու անզուգական գրչով բանաստեղծօրէն նկարագրում է Հայաստան աշխարհի սրտի (Երևանի ու շրջակայ տեղերի) բնակիչ ժողովրդին, որ թէ աւանդութեամբ և թէ իր կատարած գործերով պիտի հանդիսանար հայերի անդրանիկ սերունդը... Խ. Աբովեանը մեզ համար նոր ու սիրելիներից սիրելի Եղիշէ է։ Այնտեղ վարդանն էր կռւում պարսից դէմ՝ այստեղ Աղասին։ Եղիշէն Ցաղկերտի մարդպանների, մոգեռանդ մոգերի բարբարոսութիւններն է նկարագրում՝ Խաչատուրը անգութ Սարդարի, սորա եղբօր գաղան Հասան-խանի, ֆանատիկ «մօլլէքանց» հայերի դէմ արած չարութիւններն է մեր առջև ներկայացնում։ Այն ժամանակ հայերը չէին ուզում երկրպագութիւն տալ արևին, և կրակին՝ հիմայ պատերազմում են անտանելի մահմեդականութեան դէմ և իրանց պաշտպանում։ Ինչպէս այն ժամանակ այնպէս էլ այժմ քրիստոնէութիւնը միշտ բարոյապէս յաղթող է հանդիսանում։ Եղիշէն հինգերորդ դարու հայերի անտէրութիւնն է լալիս՝ Խաչատուրը տասնուիններորդ դարու մեր թշուառութիւնն է ողբում։ Մեր աշխարհը լցուեցաւ մարտիրոսների արիւնով, բայց Քրիստոսը մի աչք էլ չը դարձրեց մեզ վրա։ Թող կրկնենք այստեղ դարձեալ Եղիշէի խօսքը... «Արդ ո՞չ ապաքէն վասն մերոյ հեղգութեան անցին այս անցք չարչարանաց ընդ աշխարհ։»

*) Ասում եմ ակադէմիական, որովհետև յայտնի է թէ այդպիսի հիմնարկութեան անդամները, (որոնցից մէկն է և մեր պրոֆէսօրը) այնքան ուշադրութիւն չեն դարձնում ռոմաններին և այլն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Գերմանական լրագիրները հաղորդում են որ Թիւրքիան պարտաւորված կը լինի վճարել Ֆրանսիային 600,000 ֆրանկ, իսկ Գերմանիային 300,000 ֆրանկ, որպէս վարձատրութիւն այդ երկու երկիրների հիւպատոսների Սալոնիկի մէջ սպանութեան համար։ Գերմանիան այն պատճառով Ֆրանսիայից պակաս պահանջեց, որ գերմանական սպանված հիւպատոսը երեխաներ չունէր։—„Тифл. Вѣстн.“ լրագրի հեռագիրը հաղորդում է յունիսի 4-ից (16), որ Թիւրքիայի երկու մինիստրներ՝ պատերազմական և արտաքին գործերի մինիստրներ սպանվեցան անյայտ չարագործների ձեռքով։ Ծովային մինիստրը նոյնպէս ծանր կերպով վիրաւորված է։— Նոյն լրագրին գրում են Թիւրքաց Վրաստանի կողմերից՝ Լազստանից և Աճարիայից, որ այդ տեղերի ազգաբնակութիւնները յուսահատ դրութեան մէջ են, Թիւրքաց տեղական վատ կառավարութեան պատճառով։ Ժողովրդին զրկում են իր բոլոր կայքից, իր հացից, մի խօսքով բոլոր նրա ունեցածը խլում են նրանից։ Ժողովուրդը մեծ նեղութիւններ է կրում Թիւրքաց հարկահաններից՝ նոյն հարկերը տարին երկու անգամ են պահանջվում։ Թիւրք հարկահանները անխնայ կոտրում են գիւղացիների ծառերը, ոչնչացնում են այգիները,—և դարձեալ պահանջում են հարկեր... Այդ անասելի նեղութիւնները ստիպեցին ժողովուրդը դիմել կառավարութեան ներկայացուցիչներին Բաթումի և Էրզրումի մէջ նրանցից արդարադատութիւնը խնդրելու համար և այդ նպատակով ուղարկվեցան պատգամաւորներ։ Բայց պատգամաւորներից մինը ճանապարհում վիրաւորվեցաւ և կողոպտվեցաւ, իսկ միւսները երկիւղից վերադարձան, իրանց նպատակին չը հասած։—Եթէ մահմեդականութիւնը ընդունած վրացիների դրութիւնը փոքր-Ասիայում այդքան անմխիթար է,—ուրեմն աւելի էլ սարսափելի պէտք է լինի հայ-քրիստոնեայ ժողովրդի դրութիւնը Վանի և Մուշի կողմերը։... Ասում են որ փոքր-Ասիայի Թիւրքիահպատակ բնակիչները, թէ մահմեդական վրացիները, թէ քրիստոնեայ հայերը նախանձով նայում են իրանց արիւնակից ցեղերի դրութեան վրա, որք Ռուսաստանի հովանաւորութեան տակ են ապրում։

ԱՆԳԼԻԱ

Բերլինի „Kreuz-Zeitung“ լրագրին գրում են, որ Անգլիան յայտնել է ցանկութիւնը որ ոչ մի եւրոպական պետութիւնը ոչ մի քայլ չանէ արևելեան հարցի վերաբերութեամբ, առանց նախապէս Անգլիայի հետ խորհրդակցելու։—„Standart“ լրագիրը հաղորդում է որ Մալտա կղզու վրա ուղարկված է նորերումս զօրքի համար դեղերի պաշարը որ կը բաւականանար մի որոշ ժամանակի համար, 5000 ծովային զօրքին։—„Times“ լրագրում են որ Սերբիայի թշնամական տրամադրութիւնը Թիւրքիայի դէմ դեռ շարունակվում է։ Բելգրադում հրատարակվող „Истокъ“ սերբիական լրագիրը ասում է որ պատերազմը Թիւրքիայի հետ անհրաժեշտ է, մանաւանդ երբ երեք հիւսիսային պետութիւնների պրոգրամը ընդունված չէ եղել։ Սերբիայում համարում են Մուրադ V-ին՝ մարմնացած մոլեռանդութիւն։—Անգլիան մեծ պատրաստութիւններ է տեսնում իր նաւատորմի զինաւորելու վերաբերութեամբ։— „Köln. Zeitg.“ լրագրին գրում են որ Անգլիան ընդդէմ չէ մի խաղաղական վախճան տալուն արևելեան խառնված դրութիւնը վճռելու համար և ինքն կամենում է առաջարկել ընդհանուր եւրոպական մի կոնֆերէնցիա կազմելու։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

26-ին մայիսի

Զեզ յայտնի է արդէն հեռագրալուրից թէ նախկին սուլթան Աբդուլ-Ազիզը վախճանվել է։ Արդեօք ինչ է եղել նրա մահվան պատճառը՝ անձնասպանութիւն, թէ ուրիշ պատճառ,—այդ կը բացատրէ մեզ ժամանակով պատմութիւնը։ Առայժմ այդ անցքի պաշտօնական մեկնութիւնը այս է՝ Աբդուլ-Ազիզը փոխադրվելով Թոփքապուի պալատից Զրաղանի պալատը, մայիսի 23-ին, կիրակի առաւօտը, իր սենեակի մէջ առանձնանալով, մի սուր մկրատով կտրել է իր բազուկի երակը և իր կոկորդը։ Հաւատացնում են որ վերջին ժամանակները սուլթանի վրա նշմարելի էին խելագարութեան նշանները։ Նորա մարմինը փառաւոր յուղարկաւորութեամբ թաղեցին Սուլթան Մահմուդի գերեզմանի մէջ։—Միդհադ փաշան պետական խորհրդի նախագահ անուանվեցաւ։—Հիւսիսային երեք պետութիւնները սուլթան Մուրադին ճանաչելով, իրանց դեսպանների միջոցով շնորհաւորեցին նորա գահակալութիւնը։—Սուլթան Մուրադի անունով նոր դրամներ են կտրվում, այդ պատճառով ոսկին 140-ից այժմ 134-ի է իջած։ Կոնսոլիդները 15-ի վրա են պտտվում։—Վանի Աղթամար կղզուց մայիսի 25-ին հաղորդում են թէ մի թուրք զինուորական գնալով հայոց վանքը և ցակոր եպիսկոպոսի սենեակը մտնելով, այդ աբեղայի վրա ատրճանակ է արձակում։ Գնտակը ցակոր եպիսկոպոսի շորերը ծակելով, անցնում է և դիպչելով նորա մօտ կանգնած մի այլ աբեղային, ցակոր վարդապետին սպանում է։—Սղերթ քաղաքից խմաց են տալիս որ զաղրանցի հաջի Աբդուլ-փեթթահ բէյը, Տիգրանակերտից գնալով Սղերթ քաղաքը, սպառնացել է թէ այդտեղի բոլոր հայերին պէտք է սրի անցնէ և իր սպառնալիքը մասամբ կատարել է մի հային սրի անցնել տալով։ Այդ տեսակ բարբարոսութիւնները տեսնելով, չենք կարող հաւատալ որ Թիւրքիայի պէս երկրի մէջ, որտեղ ժողովրդը այդքան տգէտ և մոլեռանդ է, սահմանադրական պետական ձևը կարողանայ հաստատվել։ Մինչև այժմ Թիւրքիահպատակ քրիստոնեաների դրութիւնը բարւոքելու վրա ոչինչ ներգործութիւն չէ ունեցել միապետական կառավարութեան սահմանադրական ձևի փոխվելը։ Թիւրքաց ժողովուրդը դեռ երկար ժամանակ հրաժարվելու չէ իր բարբարոսական բնաւորութենից՝ անձնական ազատութենից և նիւթական ապահովութենից զրկվողը հայ է, քրիստոնեայ է, և ոչ թէ թուրք։ վիրաւորվողը, սպանվողը դարձեալ հայ է և ոչ թուրք։ տէրութեան պաշտօնեաների ձեռքով հարստահարվողը հայ է, և ոչ թուրք։ Հայերը պէտք է վերջապէս մտածեն առանց ժամանակ կորցնելու մի ելք որոնելու իրանց անմխիթար դրութենից։

* * *

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, մայիսի 22-ին

Այս տարի գարունը սկսվեցաւ այստեղ անընդհատ անձրևներով, որոնք խոստանում էին առատ պտղաբերութիւն։ Ուտելիքները օր ըստ օրէ էժանանում էին։ Բայց մայիսի սկզբներում Պարսկաստանի այլ և այլ տեղերում մի ամենաասատիկ կարկուտ եկաւ և այսպիսի արագութեամբ, որ չատ տեղ 5 րօպէ միայն տևելով, մէկ թղաչափ ծածկեց երկրի երեսը։ Կարկուտի հատիկները հասնում էին մէկ ընկուզից աւելի մեծութեան, նրանք թափեցրին ոչ միայն ծառերի պտուղները, այլ նրանց միանգամայն ճիւղակոտոր տերևաթափ արեցին։ Օդի մէջ նոյն բօպէում գտնված թռչունները սպանվեցան և դաշտերում բազմաթիւ գառներ և ոչխարներ նոյնպէս կոտորվեցան։ Դավրէժից հեռու տեղերից նոյնպէս լուրեր են հասնում, որ կարկուտը չատ կողմերում զարկել է։ Մարանդի մէջ երկնքից համարեա խոշոր սառուցի կտորներ են ընկել։ Պատճառած վնասը բազմագումար է։ Օրինակ, Դավրէժի դպրոցին պատկանած այգին կարկուտից առաջ կամենում էին վարձել 85 թումանով, բայց նորանից յետոյ կէս գնով ևս փող տուող չեղաւ։

Այստեղ չատ է խօսվում Ռաշտ քաղաքում պատահած անցքի մասին, որ իր բարբարոսութեամբ յետ չէ մնում Սալմասիի եղեռնագործութենից։ Այդ անցքը այդպէս են պատմում։ Մի պարսիկ կնոջ և մի երիտասարդ հայի մէջ նկատելի են լինում կասկածաւոր յարաբերութիւններ։ Մահմեդական ամբոխը, այս լսելով, կատաղած դիմում է քաղաքի մուշտայիդի մօտ և յայտնում է նորան։ Մուշտայիդը անմիջապէս դիմում է մէչիդը և ամբիօնը բարձրանալով, խօսում է ժողովրդին, թէ որպիսի խստութեամբ պատժում է իսլամի օրէնքը այդպիսի յանցանքներ և վերջացնում է իր քարոզը ամենասարսափելի կերպով զրգռելով ժողովուրդը, մի և նոյն ժամանակ կարդալով ողորմելի երիտասարդի մահուան դատավճիռը։ Այնուհետև ամբոխը մի քանի մօլանների առաջնորդութեամբ դուրս է գալիս մէչիդից, և սկսում է որոնել երիտասարդին։ Նորան գտնում են տան մէջ, յարձակվում են և կոտրատելով ու կողոպտելով տան բոլոր կարասիքը, երիտասարդին դուրս են քարշում։ Երիտասարդին բերելով մէչիդի դրանը մի հրապարակի վերա, այնտեղ

Սիրելի ընթերցող այս անգամ ես նպատակ չունեմ խօսելու ընդարձակ կերպով «Վէրք Հայաստանի» անմահ գրքի մասին, դորանում մեծ դեր խաղացող և մեր աշխարհի պատուական որդու «Ջիւան» Աղասու վրա, սորա քաջ ու հայրենիքին անձնուէր ընկերներու վրա, որոնց ինքը, խաչատուրը ասում է իր շնորհաւոր բերանով՝ «Հանգիստ ձեր սուրբ ոսկերացը՝ ով քաջ նահատակք։ Ձեր ջիւան զանի արիւնն ա, որ էսպէս սիրտս կրակում ա։ Ինչ հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր յիշատակը իր սըրտումը չը դրի։ Մի իմանաք, թէ ձեր ազիզ արիւնը նհախ տեղը թափվեցաւ... էս օր էլ էն ձեր նահատակութեան քարի տակիցը ձէն ա տալիս, «Հայք՝ մեզ պէս մեռէք, որ անուն ճարէք.» Գուցէ ուրիշ անգամ աւելի մանրամասը և աւելի ընդարձակօրէն խօսեմ ձեզ հետ ընթերցող և ինչ որ արժանի է ասելու՝ ասել ու յայտնել։

Եւ երբ որ այդ ուրախալի օրը կը գայ և ես էլ կամ գրչով կամ բերանով ձեր առջև կը խօսեմ Աբովեանի վրա, այն ժամանակ կը յայտնեմ, որ խաչատուրի մեծ հեղինակութիւնը դեռ ես անզուգական է, որ նա առաջին անգամ կամենալով իր սրտի սիրեկանների հետ հասկանալի լեզուով խօսել քանդեց գրաբարի՝ մեր միտքը կապկպող շղթան և մեր նոր լեզուի հիմքը դրեց իր վառվռուն վէպով։ Այն ժամանակ իրաւունք կը տանք նորա կրկնութիւններին, նորա «խակ լեզուին» ինչպէս ինքը անուանում է, նորա երբեմն ձանձրացուցիչ ճոխութիւններին և սորա հետ կը կարդանք նորա գրքի «յառաջաբանը» որով չատ տարակուսանքներ, եթէ ունենք, կը փարատուեն մեզ համար։ Եւ այնուհետև չը համարձակուելով Խիկարի և Պղնձէ քաղաքի յիմար ու անճոռնի պատմութիւնների հետ նորան էլ յիշել... կասենք որ Խ. Աբովեանը իր գիրքը գրելու ժամանակ դառել էր մի դրականական հրաբուխ և ժայթքում էր այնպիսի խօսքեր ու մտքեր, որոնք անմիջապէս բղխում էին նորա սրտի խորքերից, և ոչ թէ նա սեղանի մօտ նստած յանդեր էր փնտռում «Վէրքի» մէջ գտնուած ոտանաւորների համար, ուր պօէզիա ասած բանը ամենևին բացակայ չէ, ինչպէս մեր չատ բանաստեղծների գրուածներում։

Ուրեմն սպասելով այն ցանկալի ժամանակին, (գտնէ ինձ համար) մի անգամ դարձեալ խառնուենք Քանաքեռ գիւղացոց՝ քաջ զաւակներ աւուղ խումբը, և նոցա հետ միասին էլի մի անգամ երգենք Աղասու երգը՝

«Աղասի Ջան՝ գլխիդ զուրբան՝
«Դու ես մեր թագն ու պարծանքը։
«Աշխարքս որ բոլոր մեն գան,
«Ով կլի հատդ, դու մեր կեանքը։
«Քանի սաղ ենք, քեզ ըլինք զուրբան,
«Քո շվաքիդ տակին մնանք.
«Ախ, թէ մեռնինք, մեր գերեզման
«Էլ գաս, կոխես, որ դինջանանք....

* *

76, ապրիլ։ Ցարոյ

ժողովուրդը վայրենի կատաղութեամբ յարձակվում է նորա վերա և սրերով ծածկում է.... Յետոյ ոտներիցը մի պարան կապկով, սկսում են քաղաքի բոլոր փողոցներում քարշ տալ։ Անկարագրելի էր սոյն միջոցին ամբոխի դժոխային հոգեզմայլութիւն, թէ մինչև որ ասոիճան նա բորբոքվուած, իր սրտի ուրախութիւնը յայտնում էր հոգևոր երգերով... Այս զոհը իր ցաւալի վախճանին հասցնելէն յետոյ, ամբոխը տակաւին չէ հանդարտվում. մահմետականները գանում են և յիշեալ կընոջը։ Այս թշուառի մարը աւելի էլ սարսափելի է լինում։ Նորան տանում են քաղաքի հրապարակի վերա և մինչև կուրծքը թաղում են գետնի մէջ, այնպէս որ մարմնի վերեի մասը դրսումն է մընում։ Այնուհետև ամբոխին առաջնորդող մօլան մօտենում է զոհին և առաջին քարը ինքն գցելով, հրամայում է հետևել իր օրինակին։ Մի րոպէի մէջ խեղճ կնոջ դիակի վերա քարերից մի ահագին բլուր է ձևանում։ Ռաչտի մէջ գտնված ռուսաց, անգլիացոց և ֆրանսիացոց կօնսուլները՝ ոչ մինը չէ համարձակվում իր տանից դուրս գալ։ և ճշմարիտ է մահմետականների այդ սարսափելի մոլեռանդ բորբոքման ժամանակ նոքա կարող էին ենթարկվել Սալօնիկի զոհերի վիճակին։ Հեռագրի թերերը կարատված լինելով, անհնար է լինում թէհրան լուր տալ, բայց հետեւեալ օրը, երբ ժողովրդի կատաղութիւնը մի փոքր հանդարտվում է, ռուսաց և անգլիացոց կօնսուլները անցքը սարհանդակով թէհրան իմացում են տալիս։ Քաղաքի դատաւորը երկիւղից մի քանի օր չարունակ տանից չէ դուրս գալիս։ Այժմ լսում ենք որ Նորին Մեծութիւն Շահը ուղարկել է Ռաշտ մի գունդ զօրք և խռովութեանը դրդիչ տուող ղեկաւոր մօլաները կալանաւորվեցան և պէտք է թէհրան տարվին, այնտեղ պատժվելու համար։

Մինչև երբ պէտք է չարունակվեն Պարսկաստանում մօլաների այսպիսի մոլեռանդութիւնները, մինչև երբ....

Մէլ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հեռագիրը հաղորդում է Փարիզից, որ Բիւֆֆէ սենատոր է ընտրված։

—«Русскій Міръ» լրագիրը հաղորդում է որ Հէյխ-ուլ-իսլամը Կ. Պոլսի մէջ հրամայել է որ սօֆիթաները իրանց վրա երբէք զէնք չը մանծեն և իրաւունք չունենան հասարակական տեղերում։

—«Кавказъ» լրագրի հեռագիրը հաղորդում է յունիսի 4-ից որ մի թուրք օֆիցեր Հասան անունով մտնելով Միդհադ-փաշայի բնակարանը, ատրճանակի մի քանի հարուածներ արձակեց մինիստրների վրա և սպանեց պատերազմական մինիստրին՝ Հուսէյն-Ավնի-փաշային, արտաքին գործերի մինիստրին՝ Բաշիդ-փաշային, մի ադիւտանտին և մի հասարակ զինուորականին, և վիրաւորեց ծովային մինիստրին։ Այդ սպանութիւնը վերաբերում են վրէժխնդրութեան զգացմունքին։

—«Allg. Zeitg.» լրագիրը հաղորդում է որ Կ. Պոլսի մէջ վերջին անցքերից յետոյ արդէնվեցան երեք լրագիրներ՝ «Մեղվինէ», «Շէմս», և «Էֆքեար» Պատճառը յայտնի չէ։

—Վիէննայի «Presse» լրագրին հաղորդում են Զարայից որ Զէրնօգորիայի իշխանը յետ է կանչել հայրենիքը բոլոր հպատակներին։

—Ֆրանսիական «France» լրագիրը տեղեկացել է որ Թիւրքիայի և Եգիպտոսի մէջ յարաբերութիւնները դառնում են հետզհետէ թշնամական և կարելի է սպասել չուտով Եգիպտոսի բաժանումն Թիւրքիայից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շատերը Թիֆլիսում մեզ բերանացի չնարհակալութիւններ են յայտնել «Մշակի» № 16-ի մէջ տպված «Վերագառնանք» առաջնորդող յօդվածի համար։ Նոյնպէս նամակներով մեզ չնարհակալութիւններ են յայտնում այդ յօդվածի համար՝ Բագուից, Երևանից, Վաղարշապատից և Դավրէժից։

* * *

«Тифл. Вѣстн.» լրագրին հաղորդում են, որ իբր թէ ժանտախտը արդէն Թիւրքիայից Պարսկաստան է անցել և յայտնվել է Թավրիզից ոչ հեռու։ Եթէ այդ հիւանդութեան տարածման առաջ չեն առնի, ասում է լրագիրը, նա կարող է անցնել և մեր սահմաններից, աչքի առաջն ունենալով այն մշտական յարաբերութիւնները որք կան Պարսկաստանի և Անդրկովկասեան երկրի մէջ։

* * *

«Кавказъ» լրագրին հաղորդում են մի քանի Թիֆլիսցի վաճառականներ, որք անմիջական յարաբերութիւններ ունեն Թավրիզի հետ, որ այն լուրը, իբր թէ Թավրիզից ոչ հեռու արդէն յայտնվել է ժանտախտը՝ սուտ է։

* * *

«Тифл. Вѣстн.» լրագիրը հեռագիր է ստացել, որ Երևան քաղաքում մեծ հեղեղ է եղել։ Քաղաքի մեծ մասը աւերակ է դարձել։ Այժմ միայն սկսում են մտածել գործ դնել այն մասնաժողովի եղրակացութիւնները, որ 1873 թուին կազմվելով, վերջացրեց իր աշխատանքները 1874 թուին։

ԺՕՐԺ-ՍԱՆԴ

Մենք հաղորդած ենք մեր ընթերցողներին նշանաւոր ֆրանսիացի հեղինակ—վիպասան տիկին Ժ. օրժ-Սանդի մահվան մասին,—այժմ կը կամենայինք նորա կեանքի հետ ծանօթացնել մեր ընթերցողներին։

Օրիորդ Դիւպէն ծնվել է 1804 թվին Ֆրանսիայի Նօհան անուանված ամրոցում, որ պատկանում էր իր բաւական ունևոր ծնողներին։ Մանկութիւնը նա անցել է գեղեցիկ բնութեան մէջ, ազատ գիւղական կեանքի շրջանում, առողջ օդի մէջ։ Նա սիրում էր խաղալ չինական երեխաների հետ, սիրում էր լսել նոցա պատմութիւնները և առակները։ Այդ աշխուժով լի աղջիկը իր ծնողների ցանկութիւնը կատարելով մտաւ կոյսերի մի դպրոց ուսում շարունակելու համար, որի ընդհանուր, տարրական սկիզբները նա ետն մէջ էր ընդունել։ Նորա ազատ կեանքի ամբողջ գործունէութիւնը նորա մտածելու ձևը միշտ պահպանեց այդ երկու սկզբնական միմեանցից տարբեր այժերի ներգործութիւնը՝ գիւղական ազատ, բնական, պօէտիկական կեանքի հետքերը և միւս կողմից՝ խոր աստուածաղաչ, մինչև անդամ միստիկական զգացմունքը։

Օրիորդ Ամանտին-Լիւսիլ-Օրոր Դիւպէն 18 տարեկան դարձած (1822 թ.), պսակվեցաւ Դիւդըվան մարկիզի հետ։ Դա մի մարդ էր որ չէր կարող բաւականութիւն տալ այդ կրքոտ, տաք, ոգևորվող, յափշտակվող բնաւորութեանը։ Նա չուտով հեռացաւ նորանից և գնաց Փարիզ տանելով իր հետ իր փոքրիկ աղջկան, իսկ երկրորդ երեխային, տղային մարդուն թողնելով։ Տիկին Դիւդըվան ծանօթացաւ Փարիզում մի երիտասարդի հետ, որի անունն էր Ժիւլ Սանդօ և այդ ծանօթութիւնը բաց արեց նորա առջև մի նոր կեանք, մի նոր ասպարէզ՝ նա սկսում է գրել, փորձում է կրիտիկներ, փոքրիկ լրագրական յօդվածներ շարադրել...

Մինչև այդ ժամանակն էլ երիտարարդ կինը անչափ չատ էր կարդացել, ծանօթանալով թէ ֆրանսիական, թէ օտար երևելի գրողներին, ուսումնասիրել էր մանաւանդ Ժ. Ժ. Ռուսօին, որի մտքերին նա բոլոր սրտով համակրում էր,—բայց մանաւանդ, այդ նոր շրջանումն նա սկսում է ուսումնասիրել թէ ֆրանսիական թէ օտար գրականութիւնը։ Նա ագահութեամբ կարդում էր Շատօբրիանի, Գեօթէի, Լայբնիցի, Շեկսպիրի Բայրօնի և այլ հեղինակների գրվածները։ Առաջին նորա բօմանը, «Roseet Blanche» վերնագրով, որ նա գրեց Ժիւլ-Յանդօյի հետ միասին, ստորագրված էր Ժիւլ-Սանդ կեղծեալ անունով։ Նրանից յետոյ արդէն 1832 թուին, նա մենակ գրեց «Indiana» բօմանը և ստորագրեց նրան Ժ. օրժ-Սանդ անունով, որ և պահպանեց իր ամբողջ գրականական ասպարէզում։ Բոլորովին բաժանվելով իր մարդից 1836 թուին, նա ճանապարհորդեց Ալֆրէդ Դը-Միւսէի հետ Իտալիայում, յետոյ ութ տարի ապրեց Երևելի երաժիշտ Ֆրէդերիկ Շօպէնի հետ։ Մի օտանակ հասարակական կարծիքը վրդովված էր Ժ. օրժ-Սանդի դէմ նորա չափից դուրս ազատ կեանքի պատճառով, բայց նա ուշադրութիւն չէր դարձնում բոլոր յարձակումների վրա, հաստատում էր ազամարդի չորերը որ աւելի հեշտ լինի հասարակութեան ամեն շրջաններում պտտելու։ Նորա գրվածների մէջ էլ նշմարվում են հասարակութեան դէմ այդ բարոյական կռուի հետքերը՝ նրա բօմանները լի են կնոջ ազատութեան, կնոջ ճնչված մարդկային իրաւունքների պաշտպանութեան հայեցքներով և ինքնուրոյն թէօրիայով։ Քիչ կը պատահէ կարդացողին գտնել ընդհանուր մարդկային գրականութեան մէջ Ժ. օրժ-Սանդի պէս մարդկային սիրտը, մարդի հոգեբանական կեանքի նուրբ զգացմունքները ճանաչող և ճարտար ու խոր հետազօտող հեղինակին։ Ժ. օրժ-Սանդի գրվածները այնքան բազմաթիւ են, որ մենք կարող ենք յիշել այստեղ միայն մի քանիսներ՝ «Valentine» «Lelia» (1833), «Metella» «André» «Le Secrétaire intime» «Mauprat» (1833—1838), յետոյ «Horace» «Consuelo» «Comtesse de Rudolstadt» «Le Meunier d'Antibault» «La Filleuse» «La Mare au Diable» «Pauline» «Isidora» և այլն և այլն։ Ժ. օրժ-Սանդ գրեց նոյնպէս մի քանի թատրօնական գրվածքներ, որոնց բովանդակութիւնը քաղած էր իր բօմաններից։

Փետրվար անուանված յեղափոխութեանը (1848 թ.) նա մասնակցեց յափշտակված կերպով յեղափոխական շարժման և մի քանի յեղափոխական գրվածներ, որք ստորագրվեցան Լընդրիւ-Ռոլէնի ձեռքով, նրա գրչի ծնունդ են։ Նա հիմնեց մի հանրապետական լրագիր «La Cause du peuple» անունով։ 1854 թուին նա տպեց իր կեանքի օրագիրը «Histoire de ma vie» վերնագրով, որտեղ ընթերցողը գտնում է զարմանալի հոգեբանական ինքնաքննութիւն։

ՅԱՅՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋԻՒԼԷՊՊԷ ՄԱՍԿԵՐՊԱ.

շինում է վայրից շաօրներ ամենայն տեսակ պատուհանների թէ տների և թէ մաղազինների համար, ներկում է և դնում է իր տեղը։ Բաւականանում է չափաւոր վարձով։ Պատասխանատու է քամու դէմ դիմանալուն։

Հասցէն՝ Атаманская улица, домъ Зубалова, магазинъ Панцеръ.

1 (2)

BIBLIOGRAPHIA

CAUCASICA ET TRANSCAUCASICA

Опытъ

Справочнаго систематическаго каталога печатнымъ сочиненіямъ о Кавказѣ, Закавказіи и племенахъ, эти края населяющихъ.

составилъ

M. МІАНСАРОВЪ.

Томъ I. Отдѣлы I. и II. С. Петербургъ. Типографія О. И. Бакста, Гогенфельдена и К-° 1874—1876.

Въ продажѣ у всѣхъ Тифлисскихъ книгопродавцевъ.

Цѣна 10 рублей

2 (3)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Դավրէժ քաղաքի Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը հրաւիրում է մի վարժապետ նոյն դպրոցում դասատուութեան համար ռուսաց լեզուից, թուաբանութենից և աշխարհագրութենից։ Շաբաթական կուռնեայ 20 դաս, իւրաքանչիւրն 1¼ ժամ, ամեն մէկ առարկայից դասերի թիւը կորոշէ դպրոցի տեսչութիւնը։ Ռոճկի և պայմանների մասին դիմել „Մշակի“ խմբագրատունը, կամ Շաղինովի քարվանսարայում պ. Ա. Մելիք-Ազարեանցի կանտորը։

Թիֆլիսից դրսում գտնվող ցանկացողները կարող են թղթակցութիւն ունենալ ուղղակի դպրոցի Հոգաբարձութեան հետ Դաւրէժ քաղաքում և իւրեանց պայմանները առաջարկել։

2 (5)

ՄԱՆԳԼԻՍՈՒՄ առաջարկում են **ԴԱՍԵՐ** մուզիկայի, զանազան առարկաների, և նոր լեզուների, նմանապէս հայոց։ Պատրաստում են երեխայոց ամենայն միջնակարգ ուսումնարանների համար, թէ օրիորդական և թէ տղայոց։

Հասցէն Մանգլիսում՝ կօնսավալօվի տուն, բօշչայի դէմուդէմ։

1 (4)

Պատրաստի ունենք „Մայրենի Լեզուի“ երրորդ տարին—ընթերցանութեան դասագիրք ազգային ուսումնարանների համար, որը բաղկացած է տասն և մէկ վարժութիւններից, որոնցից առաջինը խօսում է մարդակազմութեան, կապիկների և տարուայ չորս եղանակների մասին. 2) կաթնասուն կենդանիներ. 3) թռչուններ, սողուններ, ձկներ և ստորակարգ կենդանիներ. 4) բուսաբանական և հանքաբանական 5) ֆիզիքական երևոյթներ. 6 և 7, աշխարհագրական (քաղաքական և մաթեմատիքական. աշխարհ. տեղեկութիւնք հին Հայաստանի մասին). 8, 9, 10, պատմական (Հայկազանց, Արշակունեանց հարստութեանց հինգերորդ դարու հայերի և վերջին հարստութեանց հակիրճ նկարագիրը) 11. դրաբար յօդուածներ։ Բացի այս հիմնական կէտերից՝ վարժութիւնների հետ խառն դրուած են նաև ոչ սակաւ թէ արձակ և թէ չափաբերական յօդուածներ։ Գիրքը կը բաղկանայ 15—16 տպ. թերթերից, թերթը 32 երեսից բաղկացած, Մայր. լեզ. չորրորդ տպագրութեան գիրքով։ Գրքի առաջին տպագրութեան իրաւունքը առաջարկվում է ցանկացողներին, որոնք թէ աշխատասիրութեան և թէ պայմանների հետ մանրաման ծանօթանալ կարող են Թիֆլիսում Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեանցի մօտ։ Օտարաքաղաքացիք ուղղակի կարող են դիմել՝ Моздокъ, Учителю Николаю Теръ-Гевондьянъ.

3 (3)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԹԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ, ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻԿՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի.

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութիւնը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հեռաւոր ամենատար և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղնիջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաստատութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստական հանդիսում 1872 թուին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհահանդեսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի.

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ դեղը մի տրուակի համար 1 ր. 50 կօպ.։ Փոշին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուռատպերչի փոքրիկ մեքենան։ Իւրաքանչիւրը 60 կօպ.։

Հեղուկ բաղնիջների դէմ մի տրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, լոծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպօ։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կաչութիւնների դէմ, մի տրուակ 60 կօպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մատիկային մագազինում, Դվորցովի փողոցում, Սրծբանաց տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵՊԱԼԻ մօտ, խսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԵՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։ 20 (50)

Дозволено цензурою 9 Іюня 1876 г. Тифлисъ

Типографія Энфіаджіанцъ и К-°

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ